

ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Արամ Գրիգորյանի աշխատանքային այցը  
Հերմոն համայնք

Ս/թ օգոստոսի 30-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Արամ Գրիգորյանն  
աշխատանքային այցով եղել է Վայոց ձորի մարզի Հերմոն համայնքի „Լուսի Տուր,,  
հյուրանոցային համալիրում և մասնակցել է <<Տեղական զբոսավարների  
վերապատրաստում Վայոց ձորում>> ծրագրի շրջանակում տեղի ունեցած  
<<Տուրիզմ-Վայոց ձոր>> խորագրով ֆորում-քննարկմանը: Քննարկմանը ներկա է  
եղել նաև Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Վայոց ձորի թեմի առաջնորդ Աբրահամ  
Եպիսկոպոս Մկրտչյանը:

Քննարկմանը մասնակցել են ՀԿ-ների, ֆինանսավորող կազմակերպության,  
տարածաշրջանում զբոսաշրջության զարգացման կենտրոնների, գործընկեր  
կառույցների, ինչպես նաև տուրիստական գործակալությունների ներկայացուցիչներ:

Ողջույնի խոսքով հանդես է եկել ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Արամ  
Գրիգորյանը, ով կարևորել է տեղական զբոսավարների վերապատրաստման  
դասընթացը և երիտասարդության շրջանում տուրիզմի զարգացման նկատմամբ  
եղած հետաքրքրությունը: Ֆորումի ընթացքում քննարկել է մարզում զբոսաշրջության  
զարգացման հեռանկարները:

Ներկայացվել է 2013թ-ի ապրիլի 1-ից <<Սյունիք-Զարգացում>> ՀԿ-ում մեկնարկած  
հնգամյա <<Տեղական զբոսավարների վերապատրաստում Վայոց ձորի մարզում>>  
ծրագիրը, որը ֆինանսավորվել է ԱՄՆ ՄՁԳ (USAID) Ձեռնարկությունների  
զարգացման և շուկայի մրցունակության ( EDMC ) ծրագրի կողմից:

Ծրագրի ընթացքում Վայոց ձորի մարզից 15 երիտասարդներ վերապատրաստվել են  
որպես զբոսավարներ: Դասընթացի երեքամյա տեսական դասընթացից հետո  
սկսվել է երկամյա գործնական փուլը, որի ընթացքում մասնակիցները  
պրոֆեսիոնալ զբոսավարների ուղեկցությամբ այցելել են Վայոց ձորի և Սյունիքի  
մարզերում գտնվող պատմամշակութային կոթողներ՝ զբոսավարության գործնական  
աշխատանքներ իրականացնելու:

Ծրագրի ներկայացումից հետո մասնակիցները քննարկել են տարածաշրջանում  
տուրիզմի զարգացման հեռանկարները, որի ենթացքում ոլորտի զարգացման  
վերաբերյալ մի շարք առաջարկություններ է արվել մարզային և տեղական  
ինքնակառավարման մարմինների, Վայոց ձորի թեմի առաջնորդի, ինչպես նաև  
տուրիստական կազմակերպությունների, կրթական ու մշակութային  
հաստատությունների կողմից: